ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՄՀԳ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՇՄՀԳ դրամաշնորհ TF0A3230

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2017 փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6
ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 8
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ 15

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Ամիրյանի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 23.09.2016թ. կնքված ՇՄՀԳ Դրամաշնորհ TF0A3230 Դրամաշնորհի Նամակ համաձայնագրով ֆինանսավորվող (Նամակ համաձայնագիր) և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող "Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ՇՀՄԳ դրամաշնորհային ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017թ. փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, կից հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2017թ. փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն "Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամային միջոցների սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱՈՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում:

Մենք անկախ ենք Ծրագրից և ՀՏԶՀ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական ԲԻ-ԴԻ-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և ԲԻ-ԴԻ-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հանգամանքի շեշտադրում –Ծրագրի ավարտ

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծնթ՝ 9-ին, որտեղ ներկայացված է, որ Ծրագիրը ավարտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏՁՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՀՄԴ-ի Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված *«Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով»* ՀՀՀՀՄ ստանդարտի և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

BDO

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Նամակ համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, ՀՏՋՀ-ի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված Նամակ համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Նամակ Համաձայնագրի: ՀՏՋՀ-ի կողմից հաշվետու տարվա վերաբերյալ ներկայացված Միջանկյալ Ֆինանսական Հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Նպատակային հաշիվները վարվել են համաձայն Նամակ Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Նամակ համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2017թ. փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում ՀՏՋՀ-ի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
20 հունիսի, 2019թ.

Վահագն Մահակյան
Տնօրեն

Կարինե Չիլինգարյան
Աուդիտոր

BDO

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման դրամաշնորհային ծրագիր
ՇՀՄԳ դրամաշնորհ TF0A3230
2017թ. փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Հոդվածներ	Մնթ.	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
		02.02.2017 – 30.04.2019	Ամբողջական առ 30.04.2019	02.02.2017 – 30.04.2019	Ամբողջական առ 30.04.2019	30.04.2019 դրությամբ	Ամբողջական առ 30.04.2019
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ		-	-				
Ֆոնդերի աղբյուրներ	7						
ՇՀՄԳ դրամաշնորհ TF0A3230		2,428,300	2,428,300				
Համայնքների ներդրում		79,518	79,518				
Ընդամենը		**2,507,818**	**2,507,818**				
Ֆոնդերի օգտագործում	8						
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ		2,369,739	2,369,739	2,330,989	2,330,989	(38,750)	(38,750)
(2) Գործառնական ծախսեր		110,377	110,377	105,308	105,308	(5,069)	(5,069)
Ընդամենը		**2,480,116**	**2,480,116**	**2,436,297**	**2,436,297**	**(43,819)**	**(43,819)**
Արտարժույթի տարբերությունից կորուստ		521	521				
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	6	27,181	27,181				

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2019թ. հունիսի 20-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Աշոտ Կիրակոսյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Ֆինանսավարչական տնօրեն

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման դրամաշնորհային ծրագիր
ՇՀՄԳ դրամաշնորհ TF0A3230
2017թ. փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Ծրագրի բաղադրիչներ	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	02.02.2017 – 30.04.2019	Ամբողջական առ 30.04.2019	02.02.2017 – 30.04.2019	Ամբողջական առ 30.04.2019	02.02.2017 – 30.04.2019	Ամբողջական առ 30.04.2019
Կապիտալ ներդրումներ տեղական զարգացման և հանրային ծառայությունների մատուցման ու կարողությունների զարգացման համար	2,480,116	2,480,116	2,436,297	2,436,297	(43,819)	(43,819)
a) Աշխատանքներ	417,008	417,008	430,629	430,629	13,621	13,621
b) Միկրոծրագրերի համար ապրանքներ	1,941,531	1,941,531	1,889,150	1,889,150	(52,381)	(52,381)
c) Միկրոծրագրերի համար խորհրդատուների ծառայություններ և դասընթացներ	11,200	11,200	11,200	11,200	-	-
d) Գործառնական ծախսեր	110,377	110,377	105,318	105,318	(5,059)	(5,059)
Ընդամենը	2,480,116	2,480,116	2,436,297	2,436,297	(43,819)	(43,819)

Հաստատուն նպաստակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի դեկավարության կողմից 2019թ. հունիսի 20-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հաստատուն նպաստակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Աշոտ Կիրակոսյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Ֆինանսավարչական տնօրեն

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման դրամաշնորհային ծրագիր
ՇՀՄԳ դրամաշնորհ TF0A3230
2017թ. փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ
վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագրի ֆինանսավորումը

Համաձայն 2016թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված TF0A3230 ՇՀՄԳ դրամաշնորհի նամակ համաձայնագրի՝ ՎԶՄԲ-ն, հանդես գալով որպես Շվեյցարիայի միջազգային զարգացման եւ համագործակցության գործակալության (ՇՄՀԳ) կողմից ֆինանսավորվող TF072562 ֆոնդի ադմինիստրատոր, Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 2,428,300 USD (ԱՄՆ դոլար) գումարի դրամաշանորհը:

Դրամաշնորհը տրամադրվել է ի լրումն «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի» (ՍՆՏԶ ծրագիր), որը ֆինանսավորվում է ՎԶՄԲ 8483-AM վարկային համաձայնագրով: որը ուղղված է համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակի և հասանելիության բարելավմանը:

Դրամաշնորհի նամակ համաձայնագիրը ուժի մեջ է մտել 02.02.2017թ.-ին:

ՇՄՀԳ TF0A3230 դրամաշնորհի համար ծախսերի կատարման վերջնաժամկետ է սահմանված 2019թ.-ի ապրիլի 1-ը:
Մինչև փակման ամսաթիվը կատարված ծախսերը ներկայացնելու արտոնյալ ժամկետ է սահմանված փակման ամսաթվից հետո մեկ ամիս՝ 30.04.2019թ.-ը:

1.2 Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի հարավային տարածքի համայնքների՝ իրենց բաղաքացիներին պետական ենթակառուցվածքներով ապահովելու և հանրային ծառայություններ մատուցելու կարողությունը:

Ծրագիրը բաղկացած է մեկ բաղադրիչից՝ Կապիտալ ներդրումներ տեղական զարգացման և հանրային ծառայությունների մատուցման և կարողությունների զարգացման համար:

1.3 Բյուջե

Ծրագիրը ֆինանսավորվում է ՇՀՄԳ TF0A3230 դրամաշնորհից, բացառելով ՄՆՏՋ ծրագրով նույն կատեգորիայով ֆինանսավորվող ծախսերը:
Չնայած դրամաշնորհի պայմաններով նախատեսված չի եղել համաֆինանսավորում, սակայն Ծրագիրը շրջանակներում կատարված աշխատանքները համաֆինանսավորվել են նաև համայնքների ներդրումների հաշվին, 79,518 ԱՄՆ դոլարի չափով, այն համահունչ դարձնելով ՄՆՏՋ ծրագրին:

Ծախսային հոդված	ՇՀՄԳ TF0A3230 դրամաշնորհ	Ընդամենը	Դրամաշնորհով ֆինանսավորվող մասնաբաժին (ներառյալ հարկերը)
	USD	USD	
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ	2,300,300	2,300,300	100%
(2) Գործառնական ծախսեր	128,000	128,000	100%
Ընդամենը	**2,428,300**	**2,428,300**	

1.4 Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏՋՀ) կողմից, որը նախկինում անվանվում էր Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ (ՀՍՆՀ), համաձայն ԿԶՄԲ-ի և ՀՍՆՀ-ի միջև 23.09.2016թ.-ին ստորագրված TF0A3230 ՇՀՄԳ դրամաշնորհի նամակ համաձայնագրի:

ՀՍՆՀ-ը հիմնադրվել է միակ հիմնադիր Հայաստանի Հանրապետության Կառավարության 11.04.2000թ. N 162 որոշումով՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքի նախաձեռնության և պահանջարկի հիման վրա գործունեության միջոցով փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը աջակցման համար:

ՀՏՋՀ-ն իրականացնում է ՀԲ-ի և այլ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրեր՝ նպաստելով.

- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Հոգաբարձուների Խորհուրդը ՀՏՋՀ-ի բարձրագույն կառավարման մարմինն է:

ՀՏՋՀ-ի գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի՝ «RM 3 - Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ի (մարտ 2010) համաձայն:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունք

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են, կիրառելով հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամային միջոցների սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

2.4 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:
Ծրագրի բանկային հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:
ՀՀ դրամով իրականացված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ֆունկցիոնալ արժույթի միջին փոխարժեքը:

30.04.2019թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 481.26 դրամ:

2.5 Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

3. Դրամաշնորհի միջոցների առհանումների հաշվետվություն

ՇՀՍԳ դրամաշնորհ TF0A3230
2017թ. փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-և ընկած ժամանակահատվածի վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Ամսաթիվը	Ծախսային հոդվածներ		Ընդամենը
		(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ	(2) Գործառնական ծախսեր	
2	31/08/2017	-	5,340	**5,340**
3	19/12/2017	-	9,575	**9,575**
4	26/01/2018	89,110	3,891	**93,001**
5	12/02/2018	93,088	4,525	**97,613**
6	20/02/2018	126,250	442	**126,692**
7	02/03/2018	160,741	5,375	**166,116**
8	05/04/2018	187,535	5,160	**192,695**
9	28/06/2018	214,961	14,130	**229,091**
10	08/08/2018	268,738	12,539	**281,277**
11	07/09/2018	189,561	6,331	**195,892**
12	09/10/2018	87,216	5,333	**92,549**
13	23/10/2018	244,367	718	**245,085**
14	13/11/2018	252,165	7,051	**259,216**
15	07/12/2018	197,922	7,793	**205,715**
16	15/02/2019	152,472	11,620	**164,092**
17	19/04/2019	59,266	5,070	**64,336**
Ընդամենը		***2,323,392***	**104,893**	**2,428,285**

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

Ֆոնդ	ՇՀՄԳ դրամաշնորհ TF0A3230
Հաշվեհամար	900000902677
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Ադամյան փ. 1,
Արժույթ	ԱՄՆ Դոլար

	02.02.2017-30.04.2019թ. ժամանակահատված ԱՄՆ դոլար	Կուտակային առ 30.04.2019 ԱՄՆ դոլար
1. Սկզբնական մնացորդն	-	-
2. *Ավելացում.* Սկզբնական տարբերություն	-	-
3. ՀԲ ֆոնդի կանխավճար/համալրում	2,428,300	2,428,300
4. *Նվազեցում.* նպատակային հաշվից վերադարձ ՀԲ-ին	-	-
5. Նպատակային հաշվին համալրված գումարը	2,428,300	2,428,300
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդն	19	19
7. *Ավելացում.* վճարված ընդունելի ծախսերի գումար	2,425,284	2,425,284
8. *Նվազեցում.* Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	2,425,303	2,425,303
10. Վերջնական տարբերություն (5)-(9)*	2,997	2,997

(*) Աուդիտ ծառայության վճարման նպատակով այլ հաշիվ փոխանցված գումար (ծնթ. 6):

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը բացահայտում է Ծրագրի ակտիվները, պարտավորությունները և զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված է հաշվեգրման հիմունքով, համաձայն որի՝ գործարքները ճանաչվում են, երբ տեղի են ունենում (այլ ոչ միայն, երբ դրամական միջոցները ստացվում կամ վճարվում են):

	Ծնթ.	30.04.2019 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ		
Դրամական միջոցներ	6	27,181
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		27,181
ԶՈՒՏ ԱԿՏԻՎ		
Ֆոնդեր	7	
ՇՀՄԳ դրամաշնորհ TF0A3230		2,428,300
Համայնքների ներդրումներ		79,518
Ընդամենը ֆոնդեր		**2,507,818**
Աճողական ծախսեր		
Ծրագրի ծախսեր	8	2,480,116
		2,480,116
Արտարժույթի տարբերությունից կորուստ		521
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		27,181

6. Դրամական միջոցներ

Հաշիվ	Բանկ	Արժույթ	30.04.2019 ԱՄՆ դոլար
Նպատակային հաշիվ (ՇՀՄԳ TF0A3230)	Գանձապետարան	USD	19
Համայնքների ներդրումների	Արարատ բանկ	AMD	24,164
Այլ հաշվում զումար (9.գ)			2,998
			27,181

7. ՇՀՄԳ TF0A3230 դրամաշնորհի ֆինանսավորում

	02.02.2017-30.04.2019թ. ժամանակահատված ԱՄՆ դոլար	Կուտակային առ 30.04.2019թ. ԱՄՆ դոլար
Կանխավճար/(մարում), զուտ	15	15
SOE ընթացակարգեր, Առհանումների հաշվետվություններ	2,428,285	2,428,285
Ընդամենը	2,428,300	2,428,300
Ընդամենը ֆինանսավորման բյուջեի 30.04.2019թ.-ի դրությամբ հատկացված		2,428,300
ֆինանսավորման տոկոսը		100%

8. Ծրագրի ծախսումներ

8.1. Ծրագրի ծախսումները ըստ ֆինանսավորման աղբյուրների

ԱՄՆ դոլար

Հոդված	02.02.2017-30.04.2019թ. ժամանակաշրջան, և կուտակային առ 30.04.2019թ.		Ընդամենը
	ՇՀՄԳ TF0A3230 դրամաշնորհ	Համայնքների ներդրումներ	
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ	2,314,907	54,832	2,369,739
(2) Գործառնական ծախսեր	110,377	-	110,377
Ընդամենը	**2,425,284**	**54,832**	**2,480,116**

8.2. Ծրագրի բյուջեի կատարում

Հոդված	Կուտակային առ 30.04.2019թ.	Բյուջե	Կատարում
	USD	USD	%
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ	2,369,739	2,300,300	103%
(2) Գործառնական ծախսեր	110,377	128,000	86%
Ընդամենը	**2,480,116**	**2,428,300**	**102%**

9. Ծրագրի ավարտ

ՇՄՀԳ TF0A3230 դրամաշնորհի համար ծախսերի կատարման վերջնաժամկետ է սահմանված 01.04.2019թ.-ը (Փակման ամսաթիվ), իսկ մինչև փակման ամսաթիվը կատարված ծախսերը ներկայացնելու արտոնյալ ժամկետ՝ 30.04.2019թ.-ը (Արտոնյալ ժամկետ, կամ Հաշվետու ամսաթիվ):

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ.
ա/ Փակման ամսաթվից հետո չեն կատարվել Ծրագրի գծով ծախսեր; Արտոնյալ ժամկետում կարտված վճարումները վերաբերվում են մինչև Փակման ամսաթիվը կատարված ծախսերին:
բ/ Հաշվետու ամսաթվից հետո ՀԲ-ին չեն ներկայացվել առհանման դիմումներ:
գ/ Հաշվետու ամսաթվի դրությամբ առկա չեն չմարված կանխավճարներ կամ կրեդիտորական պարտքեր, բացառությամբ աուդիտի գծով ծախսի, 2,998 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով, որի վճարումը կկատարվի աուդիտորական եզրակացության տրամադրումից հետո, այդ նպատակով առանձնացված գումարից (ծնթ. 6):
դ/ Հատուկ հաշվում մնացած գումարը 19 ԱՄՆ դոլարի չափով (ծնթ. 6), օգտագործվելու է մարելու կանխավճարի չմարված մնացորդը՝ 15 ԱՄՆ դոլարի չափով (ծնթ. 7.1), իսկ մնացած գումարը օգտագործվելու է ՀԲ-ի խորհրդի որոշմամբ:
ե) Համայնքների ներդրումների հաշվում մնացած գումարը 24,164 ԱՄՆ դոլարի համարժեք գումարի չափով (ծնթ. 6), նախատեսվում է օգտագործել ՄՆՏՋ ծրագրի շրջանակներում:
զ/ Մեզ հայտնի չեն Ծրագրի նկատմամբ հարուցված կամ ակնկալվող դատական հայցերի վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման դրամաշնորհային ծրագիր
ՇՀՄԳ դրամաշնորհ TF0A3230
2017թ. փետրվարի 2-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Ծախսային հոդված	Դիմում	ՀՏՁՀ	ՀԲ	Տարբերություն
Կանխավճար	1	300,000	300,000	-
	15	(71,557)	(71,557)	-
	16	(164,092)	(164,092)	-
	17	(64,336)	(64,336)	-
		15	15	-
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ-խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ և Դասընթացներ	4	89,110	89,110	-
	5	93,088	93,088	-
	6	126,250	126,250	-
	7	160,741	160,741	-
	8	187,535	187,535	-
	9	214,961	214,961	-
	10	268,738	268,738	-
	11	189,561	189,561	-
	12	87,216	87,216	-
	13	244,367	244,367	-
	14	252,165	252,165	-
	15	197,922	197,922	-
	16	152,472	152,472	
	17	59,266	59,266	
		2,323,392	2,323,392	-
(2) Գործառնական ծախսեր	2	5,340	5,340	-
	3	9,575	9,575	-
	4	3,891	3,891	-
	5	4,525	4,525	-
	6	442	442	-
	7	5,375	5,375	-
	8	5,160	5,160	-
	9	14,130	14,130	-
	10	12,539	12,539	-
	11	6,331	6,331	-
	12	5,333	5,333	-
	13	718	718	-
	14	7,051	7,051	-
	15	7,793	7,793	-
	16	11,620	11,620	-
	17	5,070	5,070	-
		104,893	104,893	-
Ընդամենը		2,428,300	2,428,300	-